և Վաղուդու՝ Վաղադնի՝ Որոտնա վանքի վայրը, որ այժմ կոչվում է նաև Կարմիր վանք, որտեղ կառուցված է նույնպես ճոճվող, բայց իր բարձրությամբ ավելի կարճահասակ և ծավալով ավելի փոքր չափեր ունեցող սյուն: Պետք է կարծել, որ այդ սյունը կառուցվել է ոչ թե Տաթևի սյունի հետևողությամբ, այլ նրանից անկախ, ֆալլոսի պաշտամունքի նույնպիսի վաղեմի վայրում:

Տաթևի սյունը այնպիսի պատկառանք էր ներշնչել ժողովրդական զանգվածներին, որ նույնիսկ երբ XI դ. սկզբում իսմայելացիք ներս խուժեցին և գրավելով Տաթևի վանքը՝ «լցին փայտիւ» Սուրբ Գրիգորի եկեղեցին և «հրդեհեցին զգեղեցկայարմար շինուածն» և վերջը քանդեցին. նրանք կամեցան և «զսքանչելի սիւնն կործանել» ... և տեսեալ հրաշս ինչ՝ ոչ իշխեցին հպիլ... այլ զամենայն շինված վանացն այրեցին»[76]: Տաթևի սյունը մի հազարամյակից ավելի կանգուն մնում է՝ դիմանալով քանիցս անգամ կրկնված երկրաշարժներին: 1931 թվի երկրաշարժի ժամանակ, երբ կործանվեցին գլխավոր տաճարը և Գր. Լուսավորչի եկեղեցին ու գավիթը զանգակատան հետ միասին, սյունը գրեթե անխախտ մնաց, նա միայն դես ու դեն տարուբերվել էր ու կրկին կանգնել իր նախկին դիրքում: Միայն տեղ-տեղ նրա վրայի քարերի կարերն են խախտվել:

Ֆալլոսին կից Զանգեզուրում չեն հայտնաբերված կանացի սեռանդամի՝ կտէիսի պաշտման հետքեր: Արդյոք դա որևէ առնչություն ունի՞ այս կողմերում Անահիտի պաշտման թուլության հետ:

ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆ, ՄԱՀ ԵՎ ՆՆՋԵՑՅԱԼՆԵՐԻ ՊԱՇՏԱՄՈՒՆՔ

Հիվանդության և մահվան երևույթներին զանգեզուրցի հայի ունեցած վերաբերմունքի մեջ, ինչպես և թաղման ծիսակատարությունների և ննջեցյալների հանդեպ նրա տածած զգացմունքների մեջ միախառնված են շատ նախնական մտածողության ուժեղ մնացորդներ, ավելի ուշ ժամանակներում նոր հասարակական պայմանների մեջ ձևավորված աշխարհայացքների հետ: Մեծ է եղել քրիստոնեական ըմբռնումների ազդեցությունն այդ նախնական մտածողության վրա, սակայն այդ ազդեցությունն անկարող է եղել ամբողջովին կերպարանափոխել այդ նախնական մտածողությունը, որի վերապրուկները դեռ լրիվ չեն հաղթահարված: Հիվանդությունը նկատվում էր որպես մի դրսի ներգործության հետևանք կենդանի թե արդեն վախճանված մարդու կողմից կամ մի երևակայական էակի՝ ֆաշկի, փիրի, սուրբի կողմից միջամտություն: Կարելի էր կուփվել, կոխվել և հիվանդանալ կենդանի մարդուց, օրինակ՝ քառասունքի մեջ եղած ծննդկանից կամ նորապսակից, չար աչք ունեցողից, որևէ մեկի անեծքից, մանուկը՝ հում միս սենյակ բերող մեկից: Հիվանդությունը կարող էր ծագած լինել ննջեցյալից, եթե նա կարոտ էր քաշում իր տանեցիներից և ուզում էր նրանցից որևէ մեկին իր մոտ ունենալ կամ դժգոհ էր տանեցիներից իր հիշատակին համապատասխան հարգանք ցույց տալու կամ իրեն մոռանալու համար: Հիվանդությունը կարող էր ծագած լինել որևէ սրբի նույնանման դժգոհությունից, որի առիթը կարող էր ծառայած լինել սուրբին նվիրված ծառը կոտրելուց, աղբյուրը ապականելուց, մասունքը կամ գերեզմանն անպատվելուց և կամ նրա անվանը նվիրված տոնին

[76] Անդ., գլ. ԾԸ, էջ 313: